Հավելված

Մասիս համայնքի ավագանու

2023 թ. փետրվարի - ի N - Ա որոշման

ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀԱՏՈՒԿ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՐԱՎԱՌՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ՎԱՅՐԵՐԸ, ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

1. «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի համաձայն՝ Մասիս համայնքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառություն իրականացվում է Մասիս համայնքի ղեկավարի կողմից համապատասխան թույլտվություն ստացած իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի կողմից:

2. Տեխնիկական և հատուկ նշանակության հրավառություն թույլատրվում է իրականացնել Մասիս համայնքում ընդգրկված բնակավայրերի հրապարակներում և դրանց կից տարածքներում՝ սույն հավելվածով նախատեսված պայմանների պահպանմամբ:

3. Տեխնիկական և հատուկ նշանակության հրավառություն սույն հավելվածի 2-րդ կետում նշված վայրերում թույլատրվում է իրականացնել «Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին» ՀՀ օրենքով նախատեսված տոնական օրերին, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի հիման վրա Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված այլ տոնական օրերին:

4. Տեխնիկական և հատուկ նշանակության հրավառությունը սույն հավելվածի 2-րդ կետում նշված վայրերում և սույն հավելվածի 3-րդ կետում նշված օրերին իրականացվում է պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների պատվերով (նախաձեռնությամբ):

5. Սույն հավելվածի 1-ից 4-րդ կետերով նախատեսված դեպքերից զատ, Մասիս համայնքում Մասիս համայնքի ղեկավարի որոշմամբ տեխնիկական և հատուկ

նշանակության հրավառությունների իրականացումը կարող է թույլատրվել նաև սույն հավելվածի 2-րդ կետում չնշված տարածքներում, սույն հավելվածի 3-րդ կետում չնշված օրերին, ինչպես նաև սույն հավելվածի 4-րդ կետում չնախատեսված անձանց պատվերով (նախաձեռնությամբ)՝ սույն հավելվածի պահանջների պահպանմամբ:

6. Տեխնիկական և հատուկ նշանակության հրագործական արտադրատեսակների իրականացումը չի թույլատրվում ցանկացած տեսակի շենքերում, շինություններում և կառույցներում, պայթյունահրդեհավտանգ օբյեկտների տարածքներում, գազատար և նավթատար խողովակաշարերի, ինչպես նաև բարձր լարման էլեկտրահաղորդալարերի մոտակա (սպասարկման) տարածքներում, պատշգամբներում, շենքերի ճակատների ելուստային մասերում, բեմահարթակներում, ինչպես նաև ցույցերի և քայլերթերի ժամանակ:

7. Արգելվում է տեխնիկական և հատուկ նշանակության հրավառությունների իրականացումը այն վայրերում, որտեղ առկա են ծառեր, էլեկտրահաղորդման լարեր և հրավառությունների իրականացման այլ օդային խոչընդոտներ:

8. Տեխնիկական և հատուկ նշանակության հրավառություն իրականացնելու վայրի չափերը պետք է համապատասխանեն հրագործական արտադրատեսակների վրա նշված անվտանգ տարածքի նվազագույն չափերին:

9. Տեխնիկական և հատուկ նշանակության հրավառությունը պետք է իրականացվի «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջների պահպանմամբ:

Աշխատակազմի քարտուղար՝ Վ. Գաբրիելյան

Առևտրի և գովազդի բաժնի պետ՝ Մ.Առաքելյան